

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 27**

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի  
Կառավարման խորհրդի 2008թ. մարտի 12-ին ժամը 11:00-ին ՀՀ Կառավարության  
նիստերի դահլիճում կայացած հերթական նիստի

**Նիստը նախագահում էր.**

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման  
խորհրդի նախագահ, ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանը

**Մասնակցում էին՝**

**Կառավարման խորհրդի անդամներ.**

Հովիկ Աբրահամյանը	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Վարդան Խաչատրյանը	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար
Անդրանիկ Մանուկյանը	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Դավիթ Լոքյանը	ՀՀ գյուղատնտեսության նախարար
Արայիկ Հովհաննիսյանը	«Հայաստանի ավագանիների ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ
Վանիկ Սողոմոնյանը	«Ֆերմերների ազգային միավորում» ՀԿ-ի նախագահ
Աշոտ Ոսկանյանը	«Ազրոզարգացում» ՀԿ-ի նախագահ
Հրաչիկ Ջավադյանը	Կիրառական հետազոտությունների և ագրոբիզնեսի հիմնադրամի գործադիր տնօրեն
Կարինե Բաղդասարյանը	Հայաստանի միջեկեղեցական բարեգործական կլոր սեղանի գործադիր տնօրեն, Կառավարման խորհրդի անդամ Կարեն Նազարյանի լիազոր ներկայացուցիչ

**Կառավարման խորհրդի դիտորդներ.**

Կարինե Դանիելյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի բնապահպանական դիտորդ, «Հանուն կայուն մարդկային զարգացման ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ
-------------------	--

**Նիստից բացակայում էին.**

Վահրամ Ներսիսյանցը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի
--------------------	---

փոխնախագահ, ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական

Ալեքս Ռասինը

Կառավարման խորհրդի դիտորդ, Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի տնօրեն

### **Նիստին հրավիրված էին.**

Անդրանիկ Անդրեասյանը

ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ

Դավիթ Ավետիսյանը

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի տեղակալ

### **Նիստին մասնակցում էին նաև.**

Արա Հովսեփյանը

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն

Նորա Մարտիրոսյանը

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու, Կառավարման խորհրդի քարտուղար

Ռուդոլֆ Պետրոսյանը

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի գնումների ղեկավար

Լևոն Մարտիրոսյանը

ՀՀ Վարչապետի օգնական

Զալիկո Բարսեղյանը

ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ

Մերի Հարությունյանը

ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ

Հովհաննես Սահակյանը

ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ

Նիստը բացեց «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ, ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանը՝ տեղեկացնելով Կառավարման խորհրդի անդամներին, որ Հազարամյակի Մարտահրավեր Կորպորացիայի ներկայացուցիչը չի մասնակցելու տվյալ նիստին, քանի որ ՀՄԿ-ի քաղաքականության համաձայն արտակարգ դրության պարագայում վերջինիս ներկայացուցիչն իր հայեցողությամբ կարող է չմասնակցել կառավարման խորհրդի նիստերին:

ՀՀ Վարչապետը ներկաներին առաջարկեց օրակարգի վերաբերյալ կատարել հարցադրումներ և ներկայացնել առաջարկություններ, եթե այդպիսիք կան:

Օրակարգի վերաբերյալ առաջարկություն կատարեց Վարդան Խաչատրյանը՝ առաջակելով օրակարգից հանել երկրորդ հարցը, քանի որ ՀՄԿ-ի ներկայացուցիչը ներկա չէ նիստին, իսկ այդ հարցի կարգավորումը մեծամասամբ կապված է վերջինիս ներկայացրած տեղեկատվության և դիրքորոշման հետ:

ՀՀ Վարչապետը հայտնեց, որ ճիշտ չի գտնում այդ հարցի հանունը օրակարգից, քանի որ հարցը բավականին խնդրահարույց է և նպատակահարմար կլինի այն ներկայացնել կառավարման խորհրդի անդամներին:

### **Նիստի օրակարգում ներկայացված էին հետևյալ հարցերը.**

1. ՀՄԿ-ին ներկայացվող 7-րդ Հատկացման հայտի և դրան կցվող ներքոնշյալ փաստաթղթերի քննարկում և հաստատում.

ա/ Հատկացման հայտ և Եռամսյակային ֆինանսական հաշվետվություն,

բ/ Հատկացման Նախապայմանների հաշվետվություն,

գ/ ֆինանսական և աշխատանքային պլաններ,

դ/ Եռամսյակային առաջընթացի հաշվետվություն,

ե/ Գնումների պլան և գնումների կատարման հաշվետվություն:

2. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի «Ոռոգման կառավարման կազմակերպությունների կարողությունների ամրապնդում» WM/IS-06/005 խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման մրցույթի վերաբերյալ ՀՄԿ-ի առարկության նամակի և առաջարկությունների քննարկում և դիրքորոշման ներկայացում (տեղեկանքը, ՀՄԿ-ի նամակը և նամակի թարգմանությունը, ՀՄՀ-Հայաստանի պատասխան նամակը և նամակի թարգմանությունը կցվում են):

3. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ջրից դեպի շուկա բաղադրիչի շրջանակներում վարկերի տեղաբաշխման աճուրդին մասնակցած ֆինանսական հաստատությունների մրցութային արդյունքների քննարկում և հաստատում (տեղեկանքը կցվում է):

4. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի «6 մայր ջրանցքների վերականգնման նախագծում և շինարարության վերահսկում» IA-06/03 Պայմանագրի փոփոխությունների քննարկում և հաստատում (տեղեկանքը և պայմանագրի փոփոխությունը կցվում են):

5. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի «Ոռոգման չորս ինքնահոս համակարգերի կառուցման նպատակով վերջնական նախագծում և շինարարության վերահսկում» խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագրի նախագծի քննարկում և հաստատում (տեղեկանքը և պայմանագիրը կցվում են):

6. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան» ծրագրի գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի «Առաջին փաթեթում ընդգրկված ճանապարհների համար իրականացվող աշխատանքների տեխնիկական աուդիտ» խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման պայմանագրի նախագծի քննարկում և հաստատում (տեղեկանքը և պայմանագիրը կցվում են):

7. Այլ հարցեր:

ա/ Տեղեկատվություն ՀՀ-ում ոռոգվող և ծրագրի շրջանակներում վերականգնման ենթակա 6 մայր ջրանցքների սպասարկման տակ գտնվում հողատարածքների վերաբերյալ:

Օրակարգը հաստատվեց միաձայն:

## Նիստի ընթացքում.

**Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ միաձայն որոշվեց՝** հաստատել ՀՄԿ-ին ներկայացվող 7-րդ Հատկացման հայտի և դրան կցվող փաստաթղթերը:

**Օրակարգի 2-րդ հարցի քննարկման ընթացքում** շահերի բախումից խուսափելու համար նիստերի դահլիճից դուրս եկավ Հրաչիկ Ջավադյանը: Սակայն մինչև դուրս գալը պարոն Ջավադյանը հայտնեց իր վստահությունը կառավարման խորհրդի օբյեկտիվության վերաբերյալ՝ նշելով որ այս պարագայում խոսքը գնում է իր վարկանիշի և հեղինակության մասին:

Հարցի վերաբերյալ հարցադրում կատարեց Կարինե Դանիելյանը: Տիկին Դանիելյանը հայտնեց, որ տեղեկանքում նշված է, որ խորքային հորերի միայն 61 %-ն է նորմալ գործում և հենց դա է հանդիսանում այն հիմնական պատճառներից մեկը, որի համար ՀՄԿ-ն առաջարկում է Կիրառական հետազոտությունների և ագրոբիզնեսի հիմնադրամին (այսուհետև՝ ԿՀԱՀ ) հանել հաղթող ճանաչված համատեղ ձեռնարկության կազմից: Սակայն տվյալ հարցը շատ սկզբունքային է, քանի որ համատեղ ձեռնարկության կազմում ընդգրկված ընկերություններից միայն ԿՀԱՀ-ն է մասնագիտացված տվյալ ոլորտում և վերջինիս դուրս գալու պարագայում աշխատանքների արդյունավետ իրականացումն ընկնում է հարցականի տակ: Տիկին Դանիելյանը խնդրեց պարզաբանել, թե ի՞նչն էր խորքային հորերի աշխատանքի խափանման պատճառը:

Արա Հովսեփյանը ներկայացրեց ՀՄԿ-ին ուղղված ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի պատասխան նամակը՝ նշելով, որ մեծամասամբ խնդիրներն առաջացել են շահագործման ընթացքում:

Դավիթ Լոքյանը հայտնեց, որ ինքն այս հարցին որոշակի առնչություն ունի և այն ժամանակ, երբ նշանակվում էր USDA գրասենյակի նոր տնօրեն Շոն Քարմոդին, նա ուսումնասիրում էր այս հարցը: Պարոն Լոքյանը նշեց, որ բազմաթիվ այցեր է ունեցել այդ խորքային հորերի գտնվելու վայրերը, օրինակ՝ Գեղարքունիքի մարզի ճամբարակ քաղաք և պարզել, որ վերջիններիս չաշխատելու հիմնական պատճառը տեղական ինքնակառավարման մարմինների խնդիրն է, այն է՝ սխալ շահագործումը կամ անփույթ վերաբերմունքը, օրինակ՝ որոշ տեղերում գողացված են տրանսֆորմատորները: Պարոն Լոքյանը նշեց, որ ԿՀԱՀ-ը փորձառու ընկերություն է, ընդամենը 1-2 դեպքեր են եղել, երբ աշխատանքն ամբողջությամբ չի իրականացվել, բայց դրա պատճառը հանդիսացել է այն փաստը, որ հատկացված գումարը տրված աշխատանքի համար բավարար չի եղել: Բացի այդ ինքը ծանոթացել է Շ. Քարմոդիի զեկույցին, որից պարզ է դարձել, որ խորքային հորերի չաշխատելու խնդիրը ոչ մի առնչություն չունի ԿՀԱԿ-ի աշխատանքի որակի հետ:

Պարոն Լոքյանը միաժամանակ առաջարկեց ՀՄԿ ներկայացուցիչ Ալեքս Ռասինի հետ միասին այցելել և տեղում ծանոթանալ այդ խորքային հորերի չաշխատելու պատճառներին, քանի որ ակնհայտ է, որ ԿՀԱՀ-ի մեղավորությունը այստեղ բացակայում է և ՀՄՀ-Հայաստանը չպետք է ընդունի տվյալ հարցի հետ կապված ՀՄԿ-ի դիրքորոշումը:

ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանը հայտնեց իր զարմանքն այս հարցի կապակցությամբ, նշելով, որ եթե ընկերության կատարած աշխատանքն անորակ էր, ապա թող վերջինիս ենթարկեին պատասխանատվության, չէ որ այդ բնույթի բոլոր պայմանագրերում ամերիկյան կողմը միշտ պատասխանատվության լուրջ մեխանիզմներ է նախատեսում:

ՀՀ Վարչապետն ավելացրեց, որ տվյալ հարցի շուրջ երկնչելու կարիք չկա, քանի որ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը մրցույթն իրականացրել է գնումներին գործընթացին խիստ համապատասխան: Իսկ եթե ՀՄԿ-ն ինչ-ինչ պատճառներով նպատակահարմար չի համարում տվյալ ընկերության ներգրավումը ծրագրի մեջ, ապա այդ մասին կարող է հայտնել կառավարման խորհրդին՝ վերցնելով իր վրա վերջնական որոշման պատասխանատվությունը:

Արա Յովսեփյանը ներկայացրեց Համաձայնագրի Հավելված 1-ի, 3-րդ մասի c) կետի ii) ենթակետը, համաձայն որի «ՀՄԿ-ն իրավասու է իր հաստատման իրավունքն իրականացնել միայն իր հայեցողությամբ և անկախ կառավարման խորհրդի հանդիպմանը ՀՄԿ-ի ներկայացուցչի մասնակցությանը կամ նրա կողմից արտահայտված դիրքի: ՀՄԿ-ն իրավունք է վերապահում հարցի վերաբերյալ իր հաստատումը հետ կանչելու, եթե ՀՄԿ-ն եզրակացնում է, որ իր հաստատումը տրվել է Կառավարության կամ ՀՄՀ-Հայաստանի կողմից տրամադրված ոչ ամբողջական, ոչ ճշգրիտ կամ թյուր տեղեկատվության հիման վրա»: Պարոն Յովսեփյանն ավելացրեց նաև, որ իրավական տեսանկյունից տվյալ դրույթը կարելի է երկակի մեկնաբանել:

ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանը նշեց, որ այն կարող է մեզ համար ունենալ երկակի մեկնաբանություն, իսկ ՀՄԿ-ի համար՝ ոչ:

Արայիկ Յովհաննիսյանը նախ շնորհավորեց ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանին ՀՀ Նախագահի պաշտոնում ընտրվելու կապակցությամբ: Հետո անդրադառնալով քննարկվող հարցին հայտնեց, որ այն պետք է բաժանել երկու մասի. Առաջին՝ փաստաթղթային մաս և երկրորդ՝ շահերի բախման մաս: Պարոն Յովհաննիսյանը նշեց, որ փաստաթղթային մասով որևէ խնդիր չկա, քանի որ աշխատանքներն ընդունվել են պատվիրատուի կողմից և բացի այդ, ըստ իր ունեցած տեղեկատվության, ընկերությանը շնորհվել է երկրորդ պայմանագիրը: Ինչ վերաբերում է շահերի բախմանը, ապա այս հարցն ընդունվում է և այն դեպքում, երբ պայմանագրի շնորհման հարցը հաստատվի, իր կարծիքով պարոն Ջավադյանն ինքնակամ դուրս կգա ՀՄՀ-Հայաստան ծրագրի կառավարման խորհրդի կազմից:

Դավիթ Լոքյանը խնդրեց պարզաբանել, թե ի՞նչ տեղեկատվությամբ է առաջնորդվում ՀՄԿ-ն, չէ որ իրականացվել է ծրագրի աուդիտ, որը որևէ խնդիր ի հայտ չի բերել:

Արա Յովսեփյանը պարզաբանեց, որ տեղեկատվության առաջին աղբյուրն այն հաշվետվությունն է, որը պատրաստել էր Վարդան Ուռուբյանի կողմից ղեկավարված հետազոտական խումբը: Պարոն Յովսեփյանն ավելացրեց, որ ինքը ծանոթացել է այդ հաշվետվությանը և այն կարծիքին է, որ վերջինս կրում է բավականին նետրալ բնույթ: Տեղեկատվության մյուս մասը ստացվել է ոչ պաշտոնական աղբյուրներից և ՀՄԿ-ն այդ կապակցությամբ որևէ կոնկրետ պարզաբանում ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ին չի տրամադրել:

ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանն ավելացրեց, որ հարցի քննարկումը կարելի է ավարտված համարել, քանի որ անհրաժեշտ է ՀՄԿ-ի ներկայացուցչի մասնակցությունը և վերջինիս մեկնաբանությունը հարցի շուրջ: Միայն այդ մեկնաբանություններից և ՀՄԿ-ի վերջնական պաշտոնական դիրքորոշումը ստանալուց հետո հնարավոր կլինի որևէ որոշում կայացնել

Քննարկումների արդյունքում **միաձայն /9** կողմ, դեմ/ձեռնպահ չկար/**որոշվեց՝** ստանալ ՀՄԿ-ի վերջնական դիրքորոշումը հարցի շուրջ և անհրաժեշտության դեպքում հարցը ներկայացնել կառավարման խորհրդի քննարկմանը:

**Օրակարգի 3-րդ հարցը** ներկայացնելիս Արա Յովսեփյանը հայտնեց, որ համաձայն ՀՄԿ-ի ներակայացրած տեղեկատվության սույն հարցի հաստատումը կառավարման խորհրդի կողմից կլինի վերջնական և ՀՄԿ-ի հավանությունը չի պահանջվում:

Հարցադրում կատարեց Հրաչիկ Ջավադյանը, խնդրելով պարզաբանել, թե ին՞չ պետք է գրավ դնի գյուղացին վարկ ստանալու համար, արդյո՞ք կա մշակված մոտեցում այս հարցի շուրջ:

Արա Յովսեփյանը պարզաբանեց, որ բանկերը գործելու են իրենց արդեն իսկ ընդունած ընթացակարգով, ըստ էության ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը պարզապես այդ վարկերը վերաֆինանսավորելու է, եթե վարկային փաթեթը համապատասխանում է ՀՄՀ-Հայաստան ծրագրի վարկային ուղեցույցին:

Աշոտ Ոսկանյանն իր մտահոգությունը հայտնեց այն հարցի շուրջ, որ ACBA Credite Agricole Bank-ը, որը մասնագիտացված է այս ոլորտում, չի ներկայացրել մասնակցության հայտ: Միաժամանակ պարոն Ոսկանյանը ցանկանում էր ճշտել, թե արդյոք հաղթող ճանաչված բանկերն ու վարկային կազմակերպությունները պատրաստ են մասնակցել 4% տոկոսադրույքով:

Արա Յովսեփյանը պարզաբանեց, որ բանկերն ու վարկային կազմակերպությունները մասկացում են ոչ թե 4%-ով, այլ 4%-ին գումարած առաջարկված սիժվածքով: Իսկ ինչ վերաբերում է ACBA Credite Agricole Bank-ին, ապա վերջինս չի մասնակցում, քանի որ առաջարկվող գումարները նրան հավանաբար չեն հետաքրքրել:

ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանն ավելացրեց, որ ACBA Credite Agricole Bank-ը բավական լուրջ ֆինանսական ռեսուրսներ ունի և գործում է իր միջոցներով:

Դավիթ Լոքյանը նշեց, որ չնայած այն հանգամանքին, որ ACBA Credite Agricole Bank-ը պետության աջակցությամբ ստեղծված բանկ է, այնուամենայնիվ այն ունի բավականին կոշտ վարկավորման քաղաքականություն: Իր կարծիքով ՀԱՀ-Հայաստանը պետք է որդեգրի ավելի մեղմ և մատչելի վարկային քաղաքականություն:

ՀՀ Վարչապետն արտահայտեց իր գոհունակությունը, որ մյուս բանկերն այսպիսով աստիճանաբար մասնագիտանում են գյուղատնտեսության վարկավորման որոլրտում:

Վարդան Խաչատրյանն ավելացրեց, որ այս կարգի ծրագրեր արդեն իսկ իրականացվել են բանկերի կողմից, պարզապես տվյալ դեպքում գումարները ՀԱՀ-Հայաստան ՊՈԱԿ-ն է տալիս:

Դավիթ Լոքյանը հայտնեց, որ բարձր է գնահատում այն փաստը, որ նորաստեղծ ընկերություններ ևս մասնակցում են այս գործընթացին, քանի որ այդպիսով պարզապես ոլորտը զարգանում է:

Քննարկումներից հետո **միաձայն որոշվեց՝** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ջրից դեպի շուկա բաղադրիչի շրջանակներում վարկերի տեղաբաշխման աճուրդին մասնակցած ֆինանսական հաստատությունների մրցութային արդյունքները:

**Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ միաձայն որոշվեց՝** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի ենթակառուցվածք բաղադրիչի «6 մայր ջրանցքների վերականգնման նախագծում և շինարարության վերահսկում» IA-06/03 Պայմանագրի փոփոխությունները:

**Օրակարգի 5-րդ հարցի վերաբերյալ** հարցադրում կատարեց Կարինե Դանիելյանը: Վերջինիս հետաքրքրում էր այն հարցը, թե արդյո՞ք ոռոգման չորս ինքնահոս համակարգերն անցնելու են Շիկահողի արգելոցով, թե՛ ոչ:

Արա Յովսեփյանը պարզաբանեց, որ դա հայտնի կլինի միայն վերջնական նախագծման ավարտից հետո և այդ խնդիրն անպայմանորեն հաշվի կառնվի:

Պարզաբանումից հետո **միաձայն որոշվեց՝** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի ենթակառուցվածք բաղադրիչի «Ոռոգման չորս ինքնահոս համակարգերի կառուցման նպատակով վերջնական նախագծում և շինարարության վերահսկում» խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագրի նախագիծը:

**Օրակարգի 6-րդ հարցի վերաբերյալ միաձայն որոշվեց՝** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան» ծրագրի գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի «Առաջին փաթեթում ընդգրկված ճանապարհների համար իրականացվող աշխատանքների տեխնիկական աուդիտ» խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման պայմանագրի նախագիծը:

**Օրակարգի 7-րդ հարցի** շրջանակներում ՀՀ-ում ոռոգվող և ծրագրի շրջանակներում վերականգնման ենթակա 6 մայր ջրանցքների սպասարկման տակ գտնվող հողատարածքների վերաբերյալ տեղեկատվություն ներկայացրեց Արա Հովսեփյանը, նշելով, որ ի կատարումն կառավարման խորհրդի նախորդ նիստի ընթացքում տրված ՀՀ Վարչապետի հանձնարարականի, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը ճշտել է ՀՀ-ում ոռոգվող և 6 մայր ջրանցքների սպասարկման տակ գտնվող հողատարածքների թիվը և այն համապատասխանում է նախկինում ներկայացված տվյալներին, այն է՝ Հայաստանի Հանրապետությունում փաստացի ոռոգվող հողատարածքները կազմում են 125,700 հեկտար, իսկ 6 մայր ջրանցքների սպասարկման տակ գտնվող տարածքները՝ շուրջ 101,000 հեկտար, որն էլ կազմում է Հայաստանում ներկայումս ոռոգվող տարածքների մոտ 80%-ը:

**Օրակարգի 7-րդ հարցի** շրջանակներում Անդրանիկ Մանուկյանը հայտնեց, որ նախորդ օրը կայացել է ՀՄՀ-Հայաստան ծրագրի շրջանակներում իրականացվող ճանապարհաշինության առաջին փաթեթի բացումը: ՊՈԱԿ-ը գտնվում է ներկայացված հայտերի գնահատման գործընթացում: Սակայն դեռևս լուծված չէ բիտումի ձեռքբերման խնդիրը: Ներկայումս հնարավոր է բիտում ներկրել 700 ԱՄՆ դոլար արժեքով, սակայն գիտը հնարավոր է աճի մինչև 1000 ԱՄՆ դոլար: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը նամակ է ուղղել ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ին և ՀՀ ֆինանսերի և էկոնոմիկայի նախարարությանը՝ բիտումը նախապես ձեռք բերելու առաջարկով:

Արա Հովսեփյանը պարզաբանեց, որ այդ հարցը քննարկվել է ՀՄԿ-ի հետ: Ներկայումս ՀՄԿ-ի կողմից ընդունված շինարարական պայմանագրերը նախատեսում են մինչև 10%-ի չափով կանխավճար: ՀՄԿ-ն չի համաձայնվել 10%-ից ավել գումար հատկացնել որպես կանխավճար, այդ թվում նաև բիտումի ձեռքբերման համար:

ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանը հայտնեց, որ ՀՄԿ-ն գտնում է, որ դա տնտեսվարող սուբյեկտի խնդիրն է. եթե վերջինս ցանկանում է շատ շահույթ ստանալ, ապա թող նախապես ձեռք բերի բիտումն իր միջոցներով:

Արա Հովսեփյանն ավելացրեց, որ արդեն իսկ այդպիսի օրինակ ծրագրի շրջանակներում կա, մասնավորապես «Դորոժնիկ» ընկերությունը վարկ է վերցրել և նախապես գնել բիտում՝ հետագա աշխատանքների համար:

Հարցերի սպառումից հետո նիստն ավարտվեց:

«ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ»  
ՊՈԱԿ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ,  
ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ

Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

Նիստը արձանագրեց՝  
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու,  
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի քարտուղար  
Ն. Մարտիրոսյան